

ԳՈՅԱԿԱՆԻ ԿԱՊԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՎ ՀԱՏԿԱՆՇԱՅԻՆ ԻՄԱՍՏԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐՆ ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆՈՒՄ

Ժամանակակից արևելահայ գրական լեզվում կապային կառույց + գոյական լրացյալ կաղապարները, որպես շարահյուսական յուրահատուկ կառուցվածքներ, խիստ տարածված են և երբեմն հաղորդման մեջ լրացական իմաստների ձևավորման անփոխարինելի միջոցներ են: Նման կաղապարներն ինքնատիպ են և կառուցվածքի, և իմաստային արտահայտության, և՛ գործառության առումներով: Պրանցում ուշագրավ են ինչպես լրացյալ գոյականի, այնպես էլ լրացումը ձևավորող կապերի իմաստային, ծագումնաբանական և բառակազմական հատկանիշները:

Չնայած այս կաղապարները գոյություն են ունեցել մեր լեզվի ամբողջ ընթացքում (դեռևս գրաբարից) և այսօր էլ գործում են, սակայն դիտվել ու արժեքավորվել են անցյալ դարի կեսերին միայն: Պրանց անդրադարձել են մի դեպքում կապերի խոսքիմասային, առանձնահատկությունների բացահայտման, մյուս դեպքում՝ նախադասությունների մեջ որոշիչ-որոշյալ կապակցությունների վերլուծության առնչությամբ¹:

Հատկանշական է, որ կապային կառույցներով գոյականական բառակապակցություններն ըստ էության դուրս էին մնացել լեզվաբանների տեսադաշտից, որքանով կապն ու խնդիրը դիտվել էին որպես բայի լրացում կազմող միավոր: Սնշուշտ, դա անժխտելի էր, սակայն փաստ էր և այն (դեռևս գրաբարի քերականներն են նկատել և հենց Մ. Աբեղյանն էլ օրինակներով ցույց է տվել), որ որոշ բայաճանց գոյականներ ստանում են կապային կառույցներով լրացումներ, իսկ մի շարք կապեր (պես, նման, չափ) լրացում են ձևավորում առարկայանիշ գոյականների մոտ:

Պրա անառարկելի վկայությունն այն է, որ խնդրո առարկա կառույցները՝ որպես գոյականի լրացում, ազատորեն գործածվում են և՛ այն դեպքում, երբ լրացյալի անհրաժեշտ իմաստային ծավալումն ունի միայն կապային լրացումով արտահայտություն, և այն դեպքում, երբ կապային կառույցով լրացումն ունի հոլովական տարբերակ:

Ստորև փորձելու ենք ներկայացնել գոյականի՝ կապային կառույցներով հատկանշային իմաստի լրացումների հիմնական առանձնահատկությունների ընդհանուր պատկերը:

¹ Տես, Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965: Մ. Ա. Սարգսյան, Արդի հայերենի կապերը, Ե., 1995: Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Խ. Ա. Ե., 1970: Կ. Դ. Սաքեթյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Ե., 1985: Մ. Գ. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց քառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Ե., 1965: Հ. Ա. Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983, Կ. Հ. Ավանեսյան, Դիոլվների և կապերի իմաստագործառական առնչակցությունը ժամանակակից հայերենում (թեկն. առենմախոս, սեղմագիր), Ե., 2004:

Նկատելի է, որ բուն, առարկայանիշ գոյականի կապային կառույցներով լրացումները բավականին տարածված են ժամանակակից արևելահայերենում: Իրենց հաճախականությամբ և կառուցվածքային բազմազանությամբ դրանք արևելահայերենում արևմտահայերենի համեմատությամբ ավելի գործուն են և զարգացման հնարավորություններ ունեն: Պատահական չէ, որ Գ. Ջահուկյանը կատարյալ է համարում այն լեզուն, որտեղ կենսունակ են կապային կառույցները գոյականի լրացման դերում²:

Զննության առարկա կապակցությունները՝ որպես գոյականի լրացումներ, հանդես են գալիս և՛ նախադասություններում, և վերնագրային-անվանողական կառույցներում արտահայտելով որոշչային հարաբերություններ: Այս կարգի բառակապակցություններում լրացումները ձևավորվում են **առանց, կից, համապատասխան, հակառակ, համեմատ, նման, պես, չափ, մոտ, առընթեր** և մի քանի այլ կապերով, լրացյալ են դառնում բոլոր գոյականները, առանց սահմանափակման: Լրացական հարաբերության հիմք է հիմնականում կապի ծագումը, որն ածականական բնույթի է: Հետաքրքիր է, որ այդպիսի կապերով կառույցները և գոյականի, և՛ բայի լրացման դերում արտահայտում են նույն հարաբերությունները: Սակավաթիվ դեպքերում կապային կառույցը վերաբերում է լրացյալի ածականական հիմքին, որքանով որակական ածականները ևս խնդրառու են, և նրանց հատուկ է նաև կապերով ու դրանց խնդիրներով ձևավորված կառույցներով լրացում ստանալը:

Առավել հաճախադեպ են **պես** (գոյ. // կապ), **նման** (ած. // կապ) կապերով կառույցների և գոյականի կապակցությունները: Օրինակ Նրա **սաթի պես աչքերում** ավելի ուժեղ ճառագեց ատելությունը (ԳՍԹ, 2, 432): ... այդտեղ բաղաբներ ու գյուղեր կան, մարդիկ ու **իր պես մանուկներ** (ՀԹՆԵ, 1, 9): «Աղամյանը երևույթ էր, իսկական առասպել», — հուզված գոչում էր **Նեմիրովիչ** — **Պանչենկոյի պես մի հեղինակություն** (ՊԱ, 5, 292): Սուրմ են՝ ուռին **աղջիկ** էր **ինձ պես...** (ԴԹ, 1, 405): Մարթայի դեմքի վրա երևաց **զարմանքի նման** մի բան (ԱԶՊԹ, 3): Մուշեղի... կլոր սև աչքերում **տիաճության պես** մի բան առկայծեց (Ս. տ., 136): Որ եղել է դարերում մի սարսափի **նման կին** (ԵԶ, 36): **Մուկիկի պես** մարդը մեռավ (ԴԹ, 1, 255): Լուսամփոփի **պես** աղջիկ աստվածամոր աչքերով... (ԵԶ, 127):

Գործուն են նաև **կից** (ած. // մակբ. // կապ) կապով ու իր խնդրով կառույցի և գոյականի կապակցությունները: Օրինակ՝ ... նա վեր կացավ տեղից և մտնելով **ընդունարանին կից սենյակը**՝ սկսավ այդտեղ քրքրել մի գզողց (Մուր., 411): Ծերունին, հետաքրքրությունից դրված, մտավ **հյուրասենյակին կից ընթերցարանը...** (ԱՇԵ, 2, 232): Պարոն Աշխարունին բացեց **սենյակին կից դուռը** և առաջնորդեց հյուրին դեպի գրաստուն (Բաֆ., 1, 238): Մեզ մոտ գյուղ չեք գտնի, որ **եկեղեցուն կից** մի փոքրիկ **դպրոց** չունենար (Ս. տ., 9, 399):

Հանդիպում են **անց** (դերբ. // կապ), **դուրս** (մկբ. // կապ), **զատ** (դերբ. // կապ), **համապատասխան** (ած. // կապ), **հավասար** (ած. // մկբ. // կապ), **հեռու, մոտ** (մկբ. // կապ) և այլ կապային կառույցներով գոյականի լրացումներ: Օրինակ՝ Նճանվում էր **հիսունից անց ծերունու** (ՎՓ, 1, 371): Այդ մի հանգամանք, մի առաջնային, բայց տվյալ դեպքում **խնդրից դուրս** հանգամանք է

² Գ. Բ. Ջահուկյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 109:

(ՊՍՍ, 189): ... նույնիսկ մայրաքաղաքի մեջ անցնել կիսավայրենի կյանք՝ հեռու ընտանեկան անմեղ վայելչություններից (ՌՊԵ, 227): Նա չունե՞ր վայրկյանին համապատասխան արտահայտություն, քվում էր մտահոգ է (ԱԶԴԹ, 64): Իսկ պարսիկները, նրա կարծիքով, հին հարևաններ էին բարիքներով ու սովորություններով մոտ... (ն. տ., 36): - Ղուբ ուրեմն կնոջից պահանջում եք տղամարդին հավասար ուժ (ԱՇԵ, 2, 474): Չես գործել մի ուրիշ հանցանք պատմածներիցդ գատ (Շեքս., 1, 328):

Գոյականի լրացման դերում ակտիվ են նաև չափ (գոյ. ուղիղ ձև//կապ) կապով ձևավորված կառույցները, որոնցում չափ երկարժեք բառն (գոյ./կապ) արտահայտում է «մեծությամբ ծավալով հավասար աստիճան» իմաստներ պահանջելով սեռական հոլովով խնդիր լրացում, ինչպես վշտի չափ//չափով, բռան չափ//չափով և այլն: Օրինակ Խառնիխուն փախչում էին թշնամու մի վաշտի չափ զինվորներ (ԴԶ, 4, 202): Ռ՝վ կիմանա նրա սարի չափ ցավը (ԱԽՅ, 522): Գնդասեղի գլխիկի չափ մի կետ ցույց էր տալիս, թե... (ԱՇԵ, 2, 307): ... երկու օրավար, մեկ էլ մի պարիկ, բռան չափ բաղ, մեջը երկու բալի ծառ (ՊԱ, 135) ... որովհետև ամոթ է, որ Աշոտ երկաթը Գևորգ իշխանի չափ գոնե կորով չարտահայտե այս դեպքում (ԱԳՄ, 288): Վիլիսը, ճանապարհի հետ, մեկ երևում էր, մեկ կորչում, ... հետո դարձավ մուգ կանաչ մի կետ՝ գատիկ միջատի չափ (ՎՊԸԵ, 376):

Թվականներին հարադրվելով չափ կապն արտահայտում է «մոտ, շուրջ, մոտավորապես» իմաստներ՝ համատեղելով ածականական//մակբայական խոսքիմաստային արժեքներ. Օրինակ Թագավորը թեպետ ուներ կղզու մեջ հարյուրի չափ զինվոր... (ԱԳՄ, 270): Երկու շաբաթ հետո քառասունի չափ իմ աշակերտներին անունով էի կանչում (Բակ., 38):

Սոսարկայանիչ գոյականի լրացումը նրա հետ կապելու դեր է ունենում նաև առանց կապը, որն իր խնդրի հետ բացառման իմաստով սովորաբար դառնում է բայի լրացում: Սակայն խոսակցական լեզվում այն գործածվում է առ ժխտական նախածանցի նշանակությամբ, հենց այդ իմաստով էլ, որն արդեն ածական է, դառնում է գոյականական բառակապակցության բաղադրիչ: Այսպիսի կազմությունները ևս տարածված են ժամանակակից հայերենում: Օրինակ՝ Ինչքան շատ են, ա՛խ, մեր բակի թագավորներն առանց թագի (ՈԳՆ, 2): ... ծննդավա համար վաղօրոք չէի հոգս տարել. մի թեթև չուխայի վերարկու առանց աստառի... (ՌՊԵ, 128) Առանց մարմին հոգին փուչ է (ԴՇԶԳ, 34): Եվ սովորական մարմնի վրա գլխի տեղ մարդկային զանգ, ... առանց մազի, առանց մորթու (Բակ., 1, 32): Վերհիշում ես աշնան յուրտը՝ զուրկ հոտերից, առանց սարվոր (ՊԱ, 1, 165): ... ներս մտավ ներքինապետ Բագուը ... յուր առանց թերթերունքների կարմիր կոպերով... (Բաֆ., 7, 98):

Երբեմն կապային կառույցը վերաբերում է ոչ թե գոյականին, այլ նրա հիմքը կազմող ածականին: Օրինակ Եթե կյանքում կա քեզ նման մի թանկություն, ես ինչպես եմ կյանքին նայել էժան աչքով (ՊԱ, 1, 305): Կապարի նման ծանրությունը միայն փարատվեց բարձրում (ՊԱ, 131):

Պետք է նշել նաև այն հանգամանքը, որ կապային կառույցը ազատորեն լրացում է դառնում նաև գոյականաբար գործածված ածականին կամ թվականին, ինչը պայմանավորվում է հրապարակախոսության, գեղարվեստական և

գիտական լեզվի օրավուր զարգացմամբ: Օրինակ Շեն կենա հաստատ պահողիդ տունը, որ ունի իր մոտ **քեզ պես իմաստուն** (ՀԹ, 5, 78): ... եթե **քեզ նման բաջառողջները** մնան այստեղ, մենք չենք հաղթի (ՍԶՊԹ, 50): ... որպեսզի զգալ տա **ինձ նման թշվառականին** յուր և մի խեղճ գործավորի միջև եղած անհավասարությունը (ՊՍ, 80): Գրողը տանի **քեզ պես սարսաղը** (ն. տ., 7) ... **ինձ պես հազարներ** կան, պատերամը գնաց, մենք մնացինք (ՍԶ ՊԹ, 21):

Առանձնահատուկ են այն կապակցությունները, որոնցում լրացյալ գոյականի և կապային կառույցի միջև ընկած է լինում որևէ ածական: Այս դեպքում ստեղծվում է երկակի մեկնաբանություն. կապային կառույցը կարող է լրացական հարաբերություն դրսևորել ածականի կամ գոյականի նկատմամբ: Օրինակ Այս և սրա նման **գողտրիկ խոսքեր** անընդհատ շռայլում էր նա յուր սիրտիս առաջ (Սուր., 1, 103): **Վ. Սադոյանի նման լուրջ գրողներ** բազմիցս տպագրվել են նրա էջերում (Գ. Թ., 18/9, 3): Որտեղ կգտնես նրա նման **նշանավոր ստախոս** (ն. տ., 7):

Սակավադեպ հանդիպում են կապակցություններ, որոնցում կապային կառույցը վերաբերում է լրացյալ բաղադրյալ գոյականի մակբայական բաղադրիչին: Օրինակ Վանեն դեպի հյուսիս իբր ութ **ժամու չափ հեռավորությամբ**, Բզնուկյաց ծովուն ավիլ... (Րաֆ., 10, 100):

Առանձին են այն կապակցությունները, որոնք հիշեցնում են առանցքային բառը զեղչված դերբայական դարձված: Սրանք տարածված են հատկապես զեղարվեստական, ավելի շատ՝ չափածո խոսքում, ուր դրան նպաստում են բանաստեղծական լեզվի ռիթմն ու հանգավորումը: Օրինակ **Թփի վրա մի վառ զատիկ** Մանկություն է թռել, ցնդել, Ինչպես ցողի մի ջիջը **կաթիլ** Տարիների **արևի դեմ** (ՊՍ, 1, 120): **Շրթներիս վրա խոսքը** հիացքի... Տուն էի դառնում իրիկնապահին... (ն. տ., 136): **Եղինջի մոտ մի թուփ խոնարհ, թփի վրա՝ մի վառ զատիկ**... (ն. տ., 120):

Հարկ է նշել, որ բուն գոյականի լրացման դերում էլ կարող են երկու կապային կառույցներ լինել ոչ համադասության հարաբերությամբ: Սրանք խիստ հազվադեպ են հանդիպում, օրինակ Բայց ծախսորդություններից **խուսափելու հարցում նշանառության չափ վարպետ** չեն (ԳԹ, 19/10, 2):

Զնայած **պես** և **նման** կապերը նույնամիշ են, բայց յուրահատուկ գործածություններում կարող են դրսևորել իմաստային տարբեր նրբերանգներ. Թող որ առաջնեկի **Քեզ պես** ու **քեզ նման** մի աղքկա տան (ՊՍ, 3, 120):

Նախադասության մեջ կապային կառույցը երբեմն կարող է վերագրվել կամ գոյականին, կամ ստորոգյալին (այդպիսի դեպքերում լրացումը ստանում է խնդրային իմաստի երանգ): Օրինակ Ծանր արդյունաբերության **գծով պլանը** գերակատարվել է (ԽՀ, 21/9, 1): **Ղարոցին համեմատ հագուստ-կապուստ** պե՛տք է: Սեր նպատակն է վերականգնել կործանված Գյումրին՝ տալով նրա սրտի պահանջներին **համաձայն կազմակերպություն** (ՀՀ, 23/11, 1):

Երբեմն էլ կապային կառույցը կարող է վերագրվել թե բայանվանը, թե ածականին և թե բային: Օրինակ՝ **Թունավոր նետերի նման ցասկոտ բացականչություններ** արձակվեցին, որոնք ուղղակի միվեցին տղայի սրտի մեջ (Հիթվ., 1, 128):

Հանդիպում են բառակապակցություններ, որոնց լրացյալը կրկնվում է որպես իր լրացում կապի խնդիր, ինչպես՝ ... պահածոյի տուփի պես տուփ որեց շան զգեստների մոտ (Ոգն., 2): Իմ դարդիս պես դարդ չկար (Ավիս, 206):

Կենսունակությամբ աչքի են ընկնում այն կապակցությունները, որոնք բաղադրյալ անվանումներ են: Սրանք կայունացել են կապային կառույցով լրացման և գոյական լրացյալի ազատ բառակապակցություններից. Գիտահետազոտական աշխատանքների գծով պրոոեկտոր, կարևորագույն գործերի գծով քննիչ, ՀՀ նախարարների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման զխավոր վարչություն: ՀՀ նախարարների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտե: ... ինչպես հայտնի է անում Ձանգեզուրի գինված ուժերի հրամանատարության կից ռազմադաշտային դատարանի որոշումից (Բակ., 2, 382):

Ժամանակակից գրական արևելահայերենում խիստ տարածված են անվանական – վերնագրային այն բառակապակցությունները, որոնցում լրացման դեր են կատարում կապերով, երբեմն նաև նախդիրներով ձևավորված կառույցները (որոնք այժմ արդեն հնաբանություններ են և միայն ոճավորման նպատակով են գործածվում): Դրանք արտահայտում են իմաստային ամենատարբեր հարաբերություններ: Լրացումն ըստ էության զեղչված բայական անդամին է: Օրինակ Բալլադ լուսի համար (ՊԱ, 1, 182). Խոհ քահեղության մասին (Ն. տ., 1, 24): Հայ կինոգործիչները՝ ընդդեմ Ֆաշիզմի (ԱԳԱ, 221): Դիմանկար ըստ հուշատետրի (Ն. տ., 182): Հետք սրտի վրա (ՀՀ, 14/8, 2):

Ասենք նաև, որ վերնագրային–անվանողական կապակցություններում էլ իրանիշ գոյականի լրացյալը հանդես է բերում բազմաթույլայնություն: Օրինակ՝ Ուղերձ առ Սուլթան ի դիմաց երեսունվեց դավաճան էֆենդիներուն (ՌՊԵ, 256):

Ինչ վերաբերում է կապակցությունների անդամների շարադասությանը, ապա նկատելի է այսպիսի օրինաչափություն.

ա) Իրանիշ գոյականի լրացումները դրվում են նրանից առաջ: Օրինակ՝ Արդեն վաղուց փտել էր լաջվարդն էլ, ոսկե մամուռի նման մարմինն էլ (Բակ., 1, 26): Պարոն Արուսյանի բնակարանին կից սենյակում միակ դստեր հետ ապրում էր մի այրի կին (Բաֆ., 2, 268):

բ) Ածականական սերումով գոյականի լրացումները՝ նրանից հետո: Օրինակ՝ Վերջինս կաթողիկոսական աթոռը Սխթամարում ունենալը մեծ փառք էր համարում յուր համար և մինչև անգամ մի առավելություն Արարատյան իշխանության նկատմամբ (ԱԳԱ, 348):

Բայց նախադասության մեջ շարադասությունը շատ ժամանակ չի պահպանվում՝ կապված հաղորդման տարբեր նպատակների հետ: Օրինակ՝ ... ձմեռվա համար վաղօրոք չէի հոգս տարել, մի թեթև չուխայի վերարկու առանց աստառի (ՌՊԵ, 128): Ձինվորները վերջապես տեսան... սևահանդերձ մարդկանց մի խումբ՝ նման զիշերային ուրուների (ԱՁՊԹ, 186): Նա մի պանդուխտ երիտասարդ էր՝ զուրկ ծնողներից, հեռու ազգականներից (Շիրվ., 1, 329): Կույր ու զուլ մարդիկ, առանց երագի, առանց լսելու հեքիաթն այս վսեմ, Իրար կոկորդից պատառ եք հանում (Ավիս, 121):

Բերված փաստարկներից երևում է, որ հատկանշային հարաբերություն

արտահայտող կապային կառույցներով գոյականական բառակապակցությունները ժամանակակից գրական արևելահայերենի քերականական կառուցվածքի մեջ տարածված են, ունեն կազմության և իմաստային արտահայտության հարուստ համակարգ և առանձին ճկունություն ու հրապույր են տալիս խոսքին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս. Խ. Արեղյան, Չայոց լեզվի տեսություն, Ե., 1965:
2. Ս. Գ. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Ե., 1965:
3. Ս. Գ. Աբրահամյան և ուրիշներ, ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Ե., 1976:
4. Վ. Դ. Առաքելյան, ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Ե., 1957:
5. Մ. Ե. Ասատրյան, ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Ա, Ե., 1970:
6. Լ. Ս. Խաչատրյան, խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996:
7. Յ. Ա. Չարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983:
8. Ս. Ս. Սարգսյան, Սրդի հայերենի կապերը, Ե., 1955:
9. Բ. Քահուկյան, ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքներ, Ե., 1974:
10. Վ. Քոսյան, Բառակապակցական կաղապարների զարգացումը հայերենում, Ե., 1990:
11. Ա. Ժ. Մուրադյան, Խնդրային հարաբերություններ արտահայտող կապային կառույցներով գոյականական բառակապակցությունները ժամանակակից արևելահայերենում, «ՉՊՄԴ-ի գիտ. աշխտ. ժողովածու», հ. 2, Ե., 2002:

ՀԱՍՏԱՈՒՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱՇԵ – Ա. Շիրվանզադե, Երկեր, հ. 2, 1986, 4, 1987:
- ԱՎԻԱ – Ավետիք Իսահակյան, Երկեր, Երևան, 1958–1959:
- ԲԱԿ. – Ակսել Բակունց, Երկերի ժողովածու, Երևան 1955:
- ԳԹ – Գրական թերթ (օրաթերթ), Երևան, 1990:
- ԳՍԹ – Գ. Սևունց, Թեհրան, 1–2, Երևան, 1953:
- ԵԶ – Եղիշե Չարենց, Երկեր, 2, Երևան, 972:
- ՉՊՄԴ – Խ.Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան, 2, Երևան, 2002:
- ԽԶ – «Խորհրդային Հայաստան» (օրաթերթ), Երևան, 1990:
- ԶԹ – Զ. Թումանյան, Երկերի ժողովածու, 5, Երևան, 1945:
- ՀՀ – «Հայաստանի հանրապետություն» (օրաթերթ), 2001:
- ՀՇԶԶ – Հ. Շիրազ, Քնար Հայաստանի, Երևան, 1974:
- ՊԴ – Պարոնյան, Երկերի ժողովածու, 1–10, Երևան, 1962–1979:
- ՋԶ – Զ. Քոչար, Ընտիր Երկեր, 1, Երևան, 1975:
- ՍԳՍ – Մուրացյան, Գևորգ Մարգարետունի, Երևան, 1982:
- Մուր. – Մուրացյան, Երկերի ժողովածու, 1–7, Երևան, 1961–1965:

- Շեքս. – Շեքսպիր, Ընտիր երկեր, 1, Երևան, 1951:
 Շիրվ. – Շիրվանզադե, երկեր, 2, Երևան 1986:
 ՇԹՆԵ – Շ. Թաթևյան, Նրա ճանապարհը, 1, Երևան 1989:
 Ոզն. – Ոզնի (շաբաթաթերթ), Երևան, 2.11.1996:
 ՊԱ – Պատկերներ անցյալից, Երևան, 1982:
 ՊԱ – Պ. Սևակ, երկերի ժողովածու, 1–5, Երևան, 1972–1974:
 ՊՍՍ – Պ. Սևակ, Մուտք, Երևան 1986:
 ՈՊԵ – Ո. Պատկանյան, Երկեր, 1984:
 ՍԳՄԶ – Ս. Գրիգորյան, Մուսաները չլոեցին, Երևան, 1989:
 ՍԶԵ – Ս. Զորյան, Երկերի ժողովածու, 5, Երևան, 1954:
 ՍԶՊԹ – Ս. Զորյան, Պապ թագավոր, Երևան, 1949:
 ՍԽՅ – Ս. Խանգաղյան, Հողը, Երևան, 1957:
 ՍԿ – Ս. Կապուտիկյան, 2, Երկեր, 1973:
 ՎՊԸԵ – Վ. Պետրոսյան, Ընտիր երկեր, 1, Երևան, 1983:
 ՎՓ – Վ. Փափազյան, Երկեր, 1, Երևան, 1979:
 Բաֆ. – Բաֆֆի, Երկերի ժողովածու, 1–10, Երևան, 1955–1959:

A. Мурадян

СУБСТАНТИВНЫЕ СЛОВСОЧЕТАНИЯ С ПРЕДЛОЖНОЙ КОНСТРУКЦИЕЙ С АТРИБУТИВНЫМИ ЗНАЧЕНИЯМИ В СОВРЕМЕННОМ ВОСТОЧНОАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Исходя из изложенных фактов, можно сделать вывод, что субстантивные словосочетания с предложной конструкцией с атрибутивными значениями в современном восточноармянском языке распространены в грамматическом строе, имеют богатую структуру и строй, которые придают речи особую привлекательность и лаконичность.

A. Muradyan

NOUN PREPOSITIONAL PHRASES OF ATTRIBUTIVE CHARACTER IN THE EASTERN VARIANT OF THE MODERN ARMENIAN LANGUAGE

The arguments detailed show that the Noun-prepositional phrases of attributive character gain ground in the Grammar Norms of the Eastern Variant of the Modern Armenian language offering a wide range of formal and semantic features which provide the speech with a single flexibility and attraction.